Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

« » 2010 թ. №

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-Ի № 37-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին ***որոշում է.***

1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 18-ի «Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություն պատվիրակելու և արտաքին գովազդի տեղաբաշխման (տեղադրման) համայնքային կանոնները հաստատելու մասին» №37-Ն որոշման հավելվածում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) Հավելվածի 12-րդ կետի ե) ենթակետում «պատշաճ» բառը փոխարինել «օրենքով սահմանված կարգով» բառերով, իսկ «լիազորված անձի անձը» արտահայտությունը « լիազորված անձը» բառերով.

2) 19-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ.

«Առաջին անգամ անհամապատասխանություն հայտնաբերելիս գովազդատուն (գովազդակիրը) գրավոր զգուշացվում է ողջամիտ ժամկետում այն վերացնելու մասին: Սահմանված ժամկետում տեղ գտած թերությունները չշտկելու կամ 2-րդ անգամ անհամապատասխանություն թույլ տալու դեպքում գովազդատուն (գովազդակիրը) գրավոր կրկին զգուշացվում է դրանք վերացնելու մասին: Երրորդ անգամ անհամապատասխանություն հայտնաբերելու կամ տեղ գտած խախտումները սահմանված ժամկետում չվերացնելու դեպքում գովազդատուն (գովազդակիրը) պարտավորեցվում է իր միջոցներով ապամոնտաժել գովազդի միջոցը: Գովազդատուի (գովազդակրի) կողմից գովազդի միջոցը չապամոնտաժելու դեպքում այն ապամոնտաժվում է համայնքի միջոցներով, իսկ կատարված ծախսերը փոխհատուցում է գովազդատուն (գովազդակիրը):».

3) 24-րդ կետում «սահմանված դրույքաչափի նոր վճարում» բառերը փոխարինել «վճարում նոր դրույքաչափով» բառերով.

4) 25-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Գովազդի տեղաբաշխման (տեղադրման) թույլտվություն ստացած անձը կարող է այդ թույլտվությունը փոխանցել այլ անձի՝ վարչական շրջանի ղեկավարի և Երևանի քաղաքապետարանի արտաքին ձևավորման և գովազդի վարչության համաձայնությամբ։ Փոխանցումը կարող է տեղի ունենալ գովազդի տեղաբաշխման (տեղադրման) իրավունքը ձեռք բերելուց հետո 4 ամսից ոչ շուտ».

5) 26-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ.
«Գովազդատուն ունի իր գովազդի միջոցի տեղաբաշխման (տեղադրման) թույլտվության ժամկետի երկարաձգման նախապատվության իրավունք։ Այդ նպատակով գովազդատուն (գովազդակիրը) մեկ ամիս առաջ դիմում է համապատասխան վարչական շրջանի ղեկավարին»։

6) Հավելվածը լրացնել 46-րդ կետով.
«46. Նշված կանոններին չհամապատասխանող գովազդի միջոցները ենթակա են համապատասխանեցման սույն կանոններին՝ մինչև 2011 թվականի դեկտեմբերի 31-ը։ Նշված ժամկետում գովազդի միջոցները կանոններին չհամապատասխանեցնելու դեպքում դրանք ենթակա են ապամոնտաժման՝ սահմանված կարգով։»։

Նախաձեռնության հեղինակ
Երևան քաղաքի ավագանու անդամներ՝ Գ. Գասպարյան

Պ. Փլավչյան

ՏԵՂԵԿԱՆՔ– ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 18-ի №37-Ն որոշման հավելվածում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության մասին

1. Հավելվածի 19-րդ կետում առաջարկվող լրացումը նպատակ է հետապնդում կանոնակարգել գովազդատուի (գովազդակրի) կողմից գովազդի միջոցում տեղ գտած անհամապատասխանությունները վերացնելու ընթացակարգը:

2. Հավելվածի 25-րդ և 26-րդ կետերում առաջարկվող փոփոխությունները և լրացումները նպատակ ունեն իրավունք վերապահել գովազդատուին (գովազդակրին) փոխանցել գովազդի տեղադրման համար ստացած թույլտվությունը այլ անձի, ինչպես նաև ընձեռել գովազդի միջոցի տեղադրման (տեղաբաշխման) թույլտվության ժամկետի երկարաձգման նախապատվության իրավունք:

3. Հավելվածը նոր՝ 46-րդ կետով լրացնելու առաջարկը պայմանավորված է այն հանգամանքով, որպեսզի տեղ գտած անհամապատասխանությունները վերացնելու համար գովազդատուներին (գովազդակիրներին) տրվի որոշակի ժամկետ:

Նախաձեռնության հեղինակ
Երևան քաղաքի ավագանու անդամներ՝ Գ. Գասպարյան

Պ. Փլավչյան

ՏԵՂԵԿԱՆՔ

Երևան քաղաքի ավագանու 2009թ. նոյեմբերի 18-ի» №37-Ն որոշման հավելվածում փոփոխություններ և լրացումներ կատարելու առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության մասին

Երևան քաղաքի ավագանու սույն որոշման ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

Նախաձեռնության հեղինակ
Երևան քաղաքի ավագանու անդամներ՝ Գ. Գասպարյան

Պ. Փլավչյան